# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

## ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/41 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան

16.10.2019թ.
ժամը 13:30

**Հանձնաժողովի նախագահ՝** Մարի Սիմոնյան

**Անդամներ՝** Դոնարա Լալազարյան
Մարիաննա Առաքելյան
Անուշ Մարտիրոսյանի
Ռոմելա Հարությունյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**<u>ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/41 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**

(Մ. Սիմոնյան)

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
3. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**<u>1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.</u>**

(Մ. Սիմոնյան)

1.1 10.10.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում էր առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներ՝ **«Մենար» ՍՊԸ-ին, «ՍՅ. ՌՈՒ. ՄԱ» ՍՊԸ-ին, «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին և «Էկոմիքս» ՍՊԸ-ին** առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/41 ծածկագրով հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/41 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին **«ՍՅ. ՌՈՒ. ՄԱ» ՍՊԸ-ն, «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն և «Էկոմիքս» ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացրել է հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

1.3 **«Մենար» ՍՊԸ-ն** ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/41 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտով նախատեսված ապրանքի ամբողջական նկարագիրը չի ներկայացրել հրավերով սահմանված ժամկետում և կարգով. ուստի հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ

կետով որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին էլեկտրոնային միջոցով տեղեկացնել **«Մենար» ՍՊԸ-ին**՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 24.10.2019թ-ի ժամը 09:00 շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:**

(Մ. Սիմոնյան)

2.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 10.10.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ **«Մենար» ՍՊԸ-ի**, **«ՍՅ. ՌՈՒ. ՄԱ» ՍՊԸ-ի, «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի և «Էկոմիքս» ՍՊԸ-ի** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **«Մենար» ՍՊԸ-ն**, **«ՍՅ. ՌՈՒ. ՄԱ» ՍՊԸ-ն, «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն և «Էկոմիքս» ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Մ. Սիմոնյան)

4.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/41 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 23.10.2019թ.-ին 09:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Դ. Լալազարյան

Մ. Առաքելյան

Ա. Մարտիրոսյան

Ռ. Հարությունյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան